+ Քն ա՛ծ յորժամ | գաս փառոք (sic) հաւր
ի նորոգել զերկիր | ողորմեա Գրի գ որո ծա |
ռաի քո·

18. Կեչառուաց Սուրբ Աստուածածնի տաճարի հարաւային դրան կամարակալ քարի վերայ Հասանայ որդի Գրիգոր Մագիստռոսի արձանագրութիւնը 1003 թուականից, քարի գրութեան ամենագեղեցիկ օրինակներից մէկը։ Թուականի տասնաւորը կարելի է միայն Ծ ուղղել, թագաւորի և կաթուղիկոսի անունն ի նկատի ունենալով, թէև Զ է գրուած։

1· + ՆԶՔ Թ· Հա· ի Թագաւորութե
2· ան Գագկա եւ ի հայրապետութեան տ՛ն
3· Սարգսի ես Գրիգ ո ր մագիստռոս որդի Հասան
4· ա շինէցի զեկեղեցիս ինձ ի բարէխոսութ՛ն եւ ի
5· Մպատրոնին եւ իմ ո ր դեացն· ո ր ք ընթեռնոյ ք զ
6· իս յաղաւթս յիշէցէք ի Քն աղաչեմ

Երրորդ տողի «Գրիգոr» բառի մէջ վերջին երկու տառերը միացած են։ Հինգերորդ տողի «որդեացն», «որք» բառերի մէջ ընդգծուած տառերը միացած են։

19. Երերոյքի արձանագրութիւնը հարաւային դրան գլխին 1028 թուականից։ Գրութեան այս ձևը տարօրինակ է, բայց ոչ բոլորովին հազուագիւտ ԺԱ. դարում։ Այստեղ խառը գործադրուած են երկաթագրի, բոլորգրի և շեղագրի ձևեր։ Արձանագրութեան մի մասը թափուած է գետին, բայց մենք չենք նկարել։

1· + Յանուն ա՛յ ի թվականիս
2· ՆՀԻ ես բարէպաշտ թագուիս
3· դուստր Աբասա Սմբատ Շա
4· հանշահի կինս եւ Աշոտոյ մ
5· այրս որ ազատեցի զԵրերվաց թաստ
6· ակաս յորդէց յորդիս Սմբատ Շահան
7· շահանի (sic) հզուրի (sic) եւ արքաի արեւշատու
8· թեան եւ Աշոտոյ եւ · · · ·

20. Վեստ Սարգսի արձանագրութիւնը 1033 թուից, Խծկոնից Ս. Սարգսի հիւսիսային պատին։ Ուշադրութեան արժանի է այս արձանագրութիւնը իւր շատ խոր փորագրութեամբ։ Երեսը ներկուած է հաւանօրէն ԺԳ. դարում, որ անսովոր երևոյթ չէ։